ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2020 թվական թիվ 168–Ա

<<ԱՅԳԵՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 2-րդ մասով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.2020 թվականի հունիսի 8-ից լուծել <<Այգեձորի առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մուրադ Գրիգորյանի հետ 2015 թվականի հունիսի 6-ին կնքած աշխատանքային պայմանագիրը:

2.Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը 2020 թվականի հունիսի 8-ից Մուրադ Գրիգորյանին նշանակել <<Այգեձորի առողջության կենտրոն>> ՊՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

6/9/2020

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

2020թ. Հունիսի 8
ք. Իջևան